# Ես կարող եմ հրավիրել ուրիշներին հետևել Հիսուսին

*Նեփիի նման դուք կարող եք գնալ ու անել այն, ինչ Տերը պատվիրել է: (Տես 1 Նեփի 3.7:)*

Կան բազմաթիվ եղանակներ, որոնցով կարող եք հրավիրել ուրիշներին հետևել Հիսուս Քրիստոսին: Փորձեք ստորև տրված գաղափարներից մեկը կամ երկուսը: Կամ կարող եք գրել ձեր սեփական գաղափարը:

- Հրավիրեք ինչ-որ մեկին ձեզ հետ գնալ եկեղեցի:
- Ծառայեք մեկ ուրիշին ընկերոջ հետ:
- Հրավիրեք մեկ ուրիշին Եկեղեցու միջոցառմանը:
- Միասին դիտեք Եկեղեցու տեսանյութերից:
- Ձեր ընկերոջ հետ պատրաստեք *«Եկ, հետևիր Ինձ միջոցառումներ»* բաժնից որևէ բան:



ՆԿԱՐԸ՝ ՔՈՐԻ ԷԳԲԵՐՏԻ



Երբ ես մկրտվեցի, հրավիրեցի իմ դպրոցական ընկերոջը, որը չի հաճախում մեր եկեղեցի: Իսկապես շատ հաճելի էր, որ նա եկել էր իր ընտանիքի հետ:

**Սոֆիա Դ., 8 տարեկան, Ալբերտա (Կանադա)**

**Աղոթեք և ծրագիր կազմեք, թե ինչպես կհրավիրեք ուրիշներին հետևել Հիսուսին: Գրեք ձեր ծրագիրը ստորև:**

